Արձանագրություն N 2

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/12» ծածկագրով բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 26.12.2024թ.
ժամը 17:00:
ավարտ՝ 17.01.2025թ.
ժամը 12:00:

Մասնակցում էին՝

Ռուզաննա Այվազյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)
Կարապետ Բարսեղյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գույքագրման և ծրագրերի մշակման բաժնի պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Լուսինե Ղազարյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գույքագրման և ծրագրերի մշակման բաժնի տեխնիկատնտեսական վերլուծության մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Կարեն Մուշեղյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Աննա Ավագյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«Իննլայն» ՍՊԸ	ք. Երևան, Եղբայրության փ., 24/37	sergey.yepremyan@innline.am +37491581025
2	«Լոկատոր» ՓԲԸ	ք. Երևան, Ադոնցի 4/3	tender@locator.am 010 285 828
3	«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ	ք.Երևան Հակոբ Հակոբյան 3	info@sempire.net +374 44001200

2. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

2.1 Հրավերի վերաբերյալ ստացվել են թվով 2 հարցումներ, որոնց հանձնաժողովի կողմից տրամադրվել են պատասխաններ /կցվում է/:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

Մասնակցի անվանումը	Արձանագրված անհամապատասխանությունը
«Իննլայն» ՍՊԸ	- Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթում չեն ներառվել առաջարկվող մասնագիտական թիմի անդամների որակավորումը հավաստող փաստաթղթերը /դիպլոմներ, հավաստագրեր և այլն/ և ինքնակենսագրականները: - Բացակայում է հրավերի 2.4 կետի 1-ին ենթակետով պահանջվող պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթի՝ ակտի, արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները: Տեսանելի չէ նաև որպես համանման ներկայացված

	պայմանագրի գինը:
«Լոկատոր» ՓԲԸ	- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում՝ մասնագիտական փորձը սունյակում յուրաքանչյուր մասնագետի աշխատանքային ստաժը հստակ չի նշվել /Մասնագիտական աշխատանքային ստաժ ---- տարուց ոչ պակաս/, մինչդեռ աշխատանքային ստաժը պետք է հստակ նշվի:

Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները, որոշեց «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին.

«Իննլայն» ՍՊԸ և «Լոկատոր» ՓԲԸ կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները «Իննլայն» ՍՊԸ և «Լոկատոր» ՓԲԸ կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովը գնահատում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համակարգի սպասարկման ծառայություններ**	

	Նախահաշվային գին /Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետ/	
«Լոկատոր» ՓԲԸ	**60 000 000**	**72 000 000**
«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ	64 400 000	77 280 000
«Իննլայն» ՍՊԸ	510 416 666,7	612 500 000

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ պայմանագրի գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ **Ռ. Այվազյան**

Հանձնաժողովի անդամներ՝ **Կ. Բարսեղյան**

Լ. Ղազարյան

Կ. Մուշեղյան

Ա. Ավագյան

Քարտուղար՝ **Կ. Բաբախանյան**